ԳՐԻԳՈՐ ԳԱՐՈՒՆՑ

891.99 Մ
Գ-37

ՆԿԱՐՆԵՐԸ ՀՈՎ. ՇԱՎԱՐՇԻ

ՆԿԵՐԸ

ՊԵՏՀՐԱՏ 1932 ՅԵՐԵՎԱՆ

7781
14 MAR 2013

ԿԵՑՑԷ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1.

Թմբուկների թնդոցով
դրոշով ալ ու պայծառ,
մեր կոլեկտիվն է անցնում
փողոցով լայն ու պայծառ։
Մենք գնում ենք շարքերով,
միշտ կարգապահ ու կարգին,
աշխուժ ու ժիր յերգերով
ձայնակցում ենք թմբուկին։
Ծածանվում է դրոշը,
քիչ ճանապարհ է մնում,
մեր ուղին պարզ, վորոշ է՝
մենք տպարան ենք գնում։

2.

Տպարանը ահա մեծ,
դռներից մեծ ու ամուր
դուրս է գալիս վարիչը՝
մեզ տպարան է տանում։
Ուրախ, ուրախ, սիրալիր
բացատրում է ամեն ինչ,
հետո ցույց է տալիս մեզ,
աշխատանքի տեղը մեր։

891.99 մ
Գ-37
ԱԿ.

Ու մենք գնում ենք կրկին,
միշտ նայելով շուրջը մեր,
մաշինների աղմուկը,
մեզ թվում է ճոխ համերգ։

3.

Ահա պատին փակցրել,
տախտակները ահագին,
մեկը կարմիր, մեկը սև,
պլանի շունչն ու հոգին։
Ահա ցեխերը ամեն,
ամեն մեկը իր համար
իրեն անկյուն է բռնել,
կարմիր տախտակի վրա։
Ցինկոգրաֆը ահա,
իր պլանը կատարել,
վերջացրել է առանց պարտք,
ու դեռ ավել է տվել։
Լինոտիպը առավել,
թե շատ, թե լավ է տվել,
դրա համար նրան ել
կարմիր տախտակ են գրել։

1008
34314



Բոլոր, բոլոր ցեխերում,
պլանն է ճիշտ, անթերի.
միայն կազմատուն է
պլանը հետ ու թերի։
Դրա համար էլ այսօր,
մենք գնում ենք կազմատուն,
նրանց ցեխում աշխատող
բանվորներին ոգնելու։

4.

Ամեն ինչ լավ ու կարգին,
աշխատում են, կուտակում
դեզերի մեջ ահագին,
ու թղթերի արանքում։
Նրանք ծալում են թուղթը,
կամ կազմում են, կտրատում
ահա մեկ էլ, նայիր դու,
գրքերն են բարձրանում։
Այստեղ ամեն մի բանվոր,
ձեռքերի ուժն է լարել.—
ու աշխատում են, վոր
պլանները կատարեն։



Թուղթը դժվար է ծալվում
իսկ նա՝ սխալ է ծալված
ու նորից են յետ դառնում
աշխատանքին կատարած։
Սակայն ինչքան աշխատեն
ուզեն պլան կատարել.—
եսոր չորսը բանվորներ,
աշխատանքի չեն յեկել։
Եսոր լավ է. բայց հաճախ
քանիսն է, վոր չեն գալիս.
քանի՛, քանի՛, բացակա,—
աշխատանքի ժամերին։
Բայց մնացածը ահա,
աշխատում են թափ առած.
վոր պլաններն այսորվա,
մղեն առաջ ու առաջ։

Ու մենք էլ նոր ուժ առած,
վորպես բանվոր մի հմուտ,
գոգնոցները պինդ կապած,
Թուղթ ենք տանում նրանց մոտ,
Իսկ մի մասն էլ ահա տես,
շարված շարքը դագգահի
Թուղթ են ծալում նրանց պես.

2011 - 05

ցուցմունքներով վարպետի։
Թուղթ են ծալում, վոր արագ,
գասագրքերը կազմեն.
ու յերբ գնանք տպարան
մեր գրքերը մեզ հասնեն։
Ու բարձրանում են շատ-շատ
Թղթի դեզերն սպիտակ. —

Իսկ մենք ելի աշխատում
չենք յերևում Նրանց տակ։
Աշխատում ենք, աշխատում
Թուղթ ենք կարում ու ծալում
ու մեկ մեկ ել կատակում,
առանց սակայն կանգնելու։
—Համա աշխատում ե հա,
կատակում ե Վարդուշը,
ու ցույց տալով Վահանին
ծիծաղում ե, աշխատում։
Նա յել Նրան ե ասում,
ու արևի տակ պայծառ,
Թղթի դեղն ե բարձրանում
մամուլներով իր ծալ-ծալ։

6.

Ու մյուս որն արդեն շուտ,
դասագրքերը հակ-հակ
տպարանի ֆուրգոնով
տանում ելին Պետհրատ։
Ու նույն որը մենք արդեն,
գնեցինք գիրքը ուզած.
սկսեցինք պարապել,
գրքերով այդ մեր ծալած։
Վողջ գրքերը ստացանք,
ու ամեն ել իր կարգին
առաջին որը անցանք,
առաջին դասը գրքի։

7

Մյուս որը մեզ տվին,
տպարանից մի ծրար.
ահա նրանք ինչ եյին
գրել եղ թղթի վրա՝
«Կոլեկտիվի ձեր արի
աշխատանքին թող լինի,
վարպես նվեր մեզանից
վեց հատորը Լենինի...»

8.

Հետագայում ամեն որ,
մեր հանգստի որերին
գնում եյինք նրանց մոտ
և ոգնում բանվորներին։
Ու այդպիսով գրքերի
պակասը ել չզգացինք.
իսկ նրանց հետ անթերի
պլանը կատարեցինք...

ՀՀ Ազգային գրադարան
NL0396107

7781

ԳԻՆԸ՝ 50 ԿՈՊ.

Г. ГАРУНЦ

П О Д А Р О К

ГИЗ. ССРА· Эривань **1 9 3 2**

Պետհրատ № 2217 Գլավլիտ № 7497 (բ)
Տիրաժ 5000 Վիճ. Պետհրատի Տպար. № 1710

ԿԻՍԱԳՐ. ՆԿԱՐԶ. ՍՃԽ.
Ս. ԳԱՍՏԱՐՅԱՆԻ